Թ. ՏԱՐԻ — Շաբաթ 16 Դեկտեմբեր 1906 — ԹԻՒ 861

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 »

Օտարաշխարհի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար տարեկան 3 տ. վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վաճառքի համար ձեռքէն 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ուղղել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Rédaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Օտարաշխարհի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՏՈՔԹ. Ն. ՍՕԹԻՐՕՖ

Վիրաբոյժ — Մանկաբարձ

Վառնա Մարիա-Լուիզա, փողոց թիւ 8 (Զինուորական քլիւպի մօտ). Հիւանդ կընդունի ժամը 2—4 կէսօրէ վերջ.

1—5

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնուած է տպագրութեան.

Բրոշիւրի նպատակն է, առանց խտրանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսած է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրոշիւրի մէջ փաստաց դոկումանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդագրուողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

ՀԱՅ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ս. Դանաբեան եւ Ընկ.

Սոլանոգա փողոց (Պալըգ բազար) թիւ 524 Ա. ուչասթքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն դեղավաճառատանս մէջ կը գտնուին մաքուր եւ առաջնակարգ դեղերու մեծաքանակ մթերքէ զատ թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամէն տեսակ էսբէսիալիթէներ. բժշկական անօթներ, քաուչուքի սպրանց վերաբերեալ բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, պիպերօններ, ջերմաչափներ եւն եւն.

Ասոնցմէ զատ կը գտնուի նաեւ սեանկարչութեան, ոսկերչութեան եւ առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բաղադրութիւններ.

Թարմ եւ անթոտ

Նորվէկիայի ձկան իւղ

Ցարդ դեղերու սղութենէն դժգոհութիւն յայտնողները կը բաւէ որ ուրիշ տեղէ մը գնում ընելէ առաջ անգամ մը դիմեն նոր դեղավաճառատունս, ուր ապահովաբար պիտի գտնեն գներու աժանութեան հետ դեղերու ընտրելագոյնը.

Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ դեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մասնաւոր զեղչ:

Յանձնարարութիւնք փութով եւ ճշդութեամբ կը գործադրուին.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— —

Չը գիտենք բուլղարահայ գաղութը երջանիկ ընդունենք թէ դժբախտ, որ չէ կարողանում իր իր առաջնորդը ունենալ. փոխն ի փոխ կաթողիկոսից. Պոլսոյ պատրիարքից հովիւներ են գալիս, ժողովրդի ծախքերի մաստնում, իբր թէ մեր գործերը կարգադրելու համար, և անհետանում են.

Բուլղարահայը պատրիարքի հովանաւորութեան տակ մի առաջնորդ ընտրեց. հանգուցեալ Ասլանեանեպիսկոպոսին. պատրիարքը չը կարողացաւ այդ եպիսկոպոսին Թուրքիայից հանել տալ, որովհետեւ իր ղրկած հովիւ և առաջնորդական ընտրութիւնը կատարող Վահան վարդապետը իր հաշիւների մէջ սխալվելով և վիրաւորվելով ամեն միջոց ձեռք էր առել Ասլանեանին յեղափոխական ներկայացնելու սուլթանի կառավարութեան աչքում. Պատրիարքի այդ անկարողութեան առջեւ բուլղարիայի հայութիւնը համոզվեց թէ՝ առաջնորդ ունենալու համար՝ կամ պէտք է ընտրել պատրիարքի ղրկած հովիւներին, որչափ էլ որ նրանք անպէտք լինեն—կամ մի ապուշ թրքամոլի. Այդ եզրակացութեան գալուց յետոյ, Բուլղարիոյ հայութիւնը որոշեց այլեւս պատրիարքի հետ գործ չունենալ և դիմեց կաթողիկոսին. Կաթողիկոսը երկարատեւ լռութիւնից յետոյ ուղարկեց երիտասարդ Տաճատ վարդապետին, մի հոգեւորականի, որը թունդ կուսակցականի հաշակն ունէր և բնական էր որ իր այդ հանգամանքով ակամայ հակառակորդներ պէտք է գտնէր այն տարրերի մէջ, որոնք հոգեւորականների մէջ կուսակցականութիւն տեսնել չեն կարողանում. Դա մի սխալ էր կաթողիկոսի կողմից. Երկրորդ մեծ սխալը այն էր, որ կաթողիկոսը նախապէս չէր իմացրել բուլղար կառավարութեան որ բուլղարահայերի պահանջով ինքը մի պատուիրակ է ուղարկում առաջնորդական խնդիրը կարգադրելու համար. Տաճատ վարդապետը գալուց յետոյ պարտաւորված չէր լինի գանէ դուռ ընկնել, ոպէսզի կարենայ տեսակցութիւն ունենալ կառավարութեան ներկայացուցիչների հետ.

Տաճատ վարդապետի իբրեւ յեղափոխական Ռուսիայից հեռացնելը ոչ մի նշանակութիւն չունի, ինչպէս ուզում է ցոյց տալ «Իրաւունք»ը. Բուլղար կառավարութիւնը շատ լաւ գիտէ որ Էջմիածնի մի վարդապետ Ռուսիոյ համար վտանգաւոր յեղափոխական չէ և չէ կարող լինել, մանաւանդ երբ նոյն վարդապետի չեֆերը ազատօրէն ապրում են նոյն Կովկասում հակառակ իրենց կրակոտ ճառերի որ արտասանեցին Էջմիածնի կեդրոնական ժողովում. Տաճատ վարդապետը Ռուսիայից հեռացվել է իբրեւ տաճկահպատակ հոգեւորական, որը կաթողիկոսի դիւանապետի պաշտօն է կատարել և (սխալ թէ ուղիղ համոզում) Կովկասահայութեան և կաթողիկոսի միջեւ խոշոր ընդհարումների և թիւրիմացութիւնների առիթ եղել.

Փոքրիկ խնդիրների մէջ մեծ, մութ պատճառներ երեւակայելը այնքան օգտակար գործ չէ.

Ռուս կառավարութիւնը Տաճատով հետաքրքրվում էր միայն իր սահմաններում, ընդունելով նրան իբրեւ տաճկահպատակ՝ ուրիշ ոչինչ. Ինչու Մելիք Թանգեանին էլ չէ արտօրում, որովհետեւ նա ռուսահպատակ է. նա էլ յեղափոխական է, դաշնակցական, կաթողիկոսի դիւանապետ և նրա օրով էլ շատ թիւրիմացութիւններ տեղի ունեցան Վեհարանի և ժողովրդի միջեւ. Կովկասի մամուլը Մ. Թանգեանի վրա աւելի խստիւ է յարձակվում...

* * *

Պատրիարքը նորից ինչ որ մի անպիտան կղերական է ուղարկում հովիւ. Բուլղարահայը պէտք է հետեւողական լինի. Ինչպէս երեւում է խնդիրը կաթողիկոսի կարծիքով այնքան էլ դիւրին չէ լուծվում. Կաթողիկոսը եթէ համաձայնել է որ Տաճատի ղեկավարութեամբ առաջնորդ ընտրուի, բայց պատրիարքից հաստատվի, նա դրանով ոչ թէ հակասութեան մէջ է ընկել, այլ ուզել է միջին ճանապարհ գտնել՝ այն է իր ղեկավարութեամբ ժողովուրդը առաջնորդը ընտրէ, իսկ պատրիարքը հաստատէ. որով և թէ թեմի փոփոխութեան խնդիր չի ծագի, թէ բուլղար կառավարութեան հետ այդ փոփոխութեան առթիւ նոր բանակցութիւնների մէջ մտնել՝ պէտքը չի մնայ.

Մենք չենք կարծում որ պատրիարքը կաթողիկոսի պատուիրակի ղեկավարութեամբ ընտրուած առաջնորդին չը հաստատէ. Ընդհակառակը այդ միջոցով նա ինքն էլ կազատվի թէ ժողովրդի դժգոհութիւնից և թէ թուրք կառավարութիւնից առաջնորդի հաստատման և մեկնման թոյլտուութիւն խնդրելու ձանձրալի և անհաճոյ դիմումներից.

Ասացինք թէ պէտք է հետեւողական լինել. Մեզ ուրիշ մնում է չընդունել պատրիարքի ղրկած հովին, բացատրել նրան այդ այցելութեան անպէտքութիւնը և Թուրքիայից լաւ առաջնորդներ ղրկելու իր անկա-

